Շինարարություն, բարեկարգում

Նոր Նորք վարչական շրջանում 2015թ. իրականացվել են.

- Փողոցների 41300 քմ և բակային տարածքների 53456 քմ ասֆալտապատման աշխատանքներ:
- 2100 քմ պուրակների, այգիների, բակային տարածքների, խաղահրապարակների սալիկապատման աշխատանքներ:

Կանաչապատում

- «Նոր Նորք կանաչապատում» ՓԲԸ կողմից 2015թ. վարչական շրջանում վերանորոգվել է 800 գծմ ոռոգման ցանց, անցկացվել է ոռոգման նոր ցանց՝ 980 գծմ:
- «Նոր Նորք կանաչապատում» ՓԲԸ կողմից կատարվել է սիզամարգի ցանք՝ 24228 քմ, ծաղկանոցներում ծաղկասածիլների տնկում՝ 155700 հատ, վարդանոցներում վարդերի տնկում՝ 3680 հատ, ծառերի տնկում՝ 5080 հատ, ծառերի կրապատում՝ 36500 հատ, ծառերի ձևավորում, երիտասարդացում և սանիտարական մաքրում՝ 2500 հատ:

Վերակառուցվել և բարեկարգվել է Թաթուլ Կրպեյանի անվան այգին՝ 5.5 հա մակերեսով, որտեղ ստեղծված են բոլոր պայմանները բնակիչների հանգստի համար՝ կառուցվել են ամֆիթատրոն, շատրվաններ, մանկական խաղահրապարակ, տեղադրվել են զրուցարաններ, նստարաններ, անցկացվել է նոր ոռոգման համակարգ, մոնտաժվել է արտաքին լուսավորության նոր ցանց, տեղադրվել է հուշաքար՝ նվիրված 2014թ. խոցված ԷՂՀ ՄԻ-24 ուղղաթիռի օդաչուների հիշատակին:

Ստեղծվել են նոր հանգստի գոտիներ.

- Մառի 7շենքին հարակից տարածքում՝ 380 քմ,
- Շոպրոն 4 շենքի հարևանությամբ՝ 475 քմ,
- 8-րդ զանգված՝ «Խաչքարին» հարող տարածքում,
- 7-րդ զանգված՝ «Հայորդաց տան» հարևանությամբ:



Վարչական շրջանի ծրագրով կատարվել են.

- 63 մուտքերի և 102 շքամուտքերի վերանորոգման աշխատանքներ,
- 8750 քմ հարթ տանիքների վերանորոգման աշխատանքներ,
- 51 վթարային պատշգամբների ամրացման և վերանորոգման աշխատանքներ,
- 6 վերելակի հիմնանորոգման աշխատանքներ:

Համատիրությունների միջոցներով կատարվել են 7181 քմ հարթ և 5381 քմ թեք տանիքների վերանորոգման աշխատանքներ, վարչական շրջանի և համատիրությունների հետ համատեղ կատարվել են 2320 թեք տանիքի վերանորոգման և 720 գծմ ջրթափ խողովակների տեղադրման աշխատանքներ:

Կառուցվել, վերակառուցվել, բարեկարգվել և նոր տեսք են ստացել մանկական խաղահրապարակները.

- Գալշոյան 30 շենքի հարակից տարածք,
- Հովհաննիսյան 8/1 հարակից տարածք,
- Մոլդովական 19 շենքի հարակից տարածք,
- Դ. Մալյան 20 շենքի հարակից տարածք:

Հիմնանորոգվել են Հ. Դանիելյանի անվան արվեստի դպրոցը, թվով 3 մանկապարտեզների տանիքներ, Նոր Նորքի կենտրոնական գրադարանի 8-րդ զանգվածում գործող մասնաճյուղը: 6-րդ զանգվածում շարունակվել են կասկադատիպ համալիրի վերակառուցման աշխատանքները և կավարտվեն 2016 թվականին:

Վերակառուցվել և բարեկարգվել է 49 բակային տարածք, տեղադրվել են 32 մանկական խաղեր, 65 մարզասարք, 168 զրուցարան, 130 նստարան, հիմնանորոգվել է 5 աստիճանահարթակ: 7-րդ և 9-րդ զանգվածների միջնամասում՝ հրաձգարանի հարևանությամբ, կառուցվել է մինի ֆուտբոլի դաշտ:

«ՀԵՑ» ՓԲ ընկերության հետ համագործակցության արդյունքում կատարվել են բազմաբնակարան շենքերի 18 մուտքերի էլեկտրաէներգիայի մատակարարման համակարգի վերանորոգման և շենքերը սնուցող 800 գծմ մալուխի վերանորոգման աշխատանքներ:

«Երքաղլույս» ՓԲ ընկերության հետ համագործակցության արդյունքում կատարվել են Վիլնյուս փողոցի նորակառույց 550 գծմ ճանապարհահատվածի արտաքին լուսավորության ցանցի մոնտաժման աշխատանքներ:

«Երևան Ջուր» ՓԲ ընկերության հետ համագործակցության արդյունքում կատարվել են ջրամատակարարման համակարգի 2460 գծմ, կոյուղատար համակարգի 350 գծմ և 32 դիտահորերի վերանորոգման աշխատանքներ:

Հաշմանդամություն ունեցող անձանց սպասարկման համար Նոր Նորք վարչական շրջանում 2015թ. կառուցվել է 80 թեքահարթակ:

«Այցելություն զինծառայողին» ծրագրի շրջանակներում Նոր Նորք վարչական շրջանից 100-ից ավելի ծնողներ այցելել են ՀՀ և ԼՂՀ սահմանամերձ զորամասերում ծառայող իրենց զավակներին:

Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին և երեխաներին.

- 500 ընտանիքի ցուցաբերվել է դրամական աջակցություն,
- 80 ընտանիքի տրամադրվել է հագուստ, 30 ընտանիք ստացել է վառելափայտ,
- սգո արարողությունների համար աջակցություն է ստացել 40 ընտանիք,
- աջակցություն է ցուցաբերվել Արցախյան պատերազմի մասնակից, հաշմանդամ և զոհված ազատամարտիկների 350 և սիրիահայ 33 ընտանիքի,
- 675 շահառու օգտվում է բարեգործական ճաշարանից,

Սոցիալական ոլորտ

- 22 մանկապարտեզների ավագ խմբերի 1397 երեխա որպես նվեր ստացել է դպրոցական պայուսակ և գրենական պիտույքներ,
- սոցիալապես անապահով ընտանիքների 2-4-րդ դասարանների շուրջ 538, ինչպես նաև՝ սիրիահայ 12 երեխայի հատկացվել են դպրոցական պայուսակներ և գրենական պիտույքներ,
- ամանորյա տոների առթիվ սոցիալապես անապահով շուրջ 2000 ընտանիքի տրամադրվել են ամանորյա սննդի փաթեթներ:
- կազմակերպվել է Նոր Նորքի սոց. անապահով ընտանիքների շուրջ 300 երեխաների հանգիստը բակային ճամբարներում, 115 երեխաների հանգիստը՝ Ծաղկաձորի «Աղբյուր» ճամբարում և 12 երեխաների հանգիստը՝ Սևանի «Արևիկ» մանկական առողջարանում:

«Էրեբունի-Երևան 2797» տոնակատարության սոցիալական բաղադրիչի շրջանակում Երևանի քաղաքապետի նախաձեռնությամբ վարչական շրջանի սոցիալապես անապահով 276 ընտանիքի տրամադրվել է աջակցություն /կենցաղային տեխնիկա/:

Կրթության ոլորտ

Երևանի 2015 թվականի շինարարական ծրագրով հիմնանորոգվել են հհ. 100, 104, 112 մանկապարտեզների տանիքները և դիմապատերը:
«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից հիմնանորոգվել է հ. 103 մանկապարտեզի տանիքը, բարերարների աջակցությամբ հիմնանորոգվել է հ. 101 մանկապարտեզի 2 սանհանգույց, իսկ հ. 117 մանկապարտեզի բակում կառուցվել է ընդարձակ խաղահրապարակ:

Կրթության ոլորտ

Նոր Նորքի մանկապարտեզները 2015 թվականին համալրվել են նոր գույքով՝մանկական զգեստապահարան՝ 134 հատ, երկհարկանի մահճակալ՝ 218 հատ, խոհանոցի դարակաշարով պահարան՝ 40 հատ, սննդի մշակման սեղան՝ 54 հատ, խմորի մշակման սեղան՝ 21 հատ, պատրաստի սննդի բաշխման սեղան՝23 հատ, սառնարան՝ 14 հատ:

Նոր Նորքի թվով 22 մանկապարտեզների 139 խմբերում երեխաների ցուցակային թիվը միջին հաշվարկով 4342 է:

Նոր Նորքի թվով 22 մանկապարտեզներում կազմակերպվել են ծրագրով նախատեսված միջոցառումներ:

Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի նախաձեռնությամբ աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի կողմից կազմակերպվել են սպորտլանդիաներ, Ամանորին, Հունիսի 1-ին և «Էրեբունի-Երևան 2797» տոնակատարությանը նվիրված զանգվածային միջոցառումներ:

Մշակույթի ոլորտ

Քաղաքապետարանի այս տարվա բարեկարգման ծրագրերի շրջանակում ամբողջությամբ հիմնանորոգվել են Հայկանուշ Դանիելյանի անվան արվեստի դպրոցը և Նոր Նորքի կենտրոնական գրադարանի 8-րդ զանգվածի մասնաճյուղը:

Մշակութային կենտրոններ հաճախող երեխաների ցուցակային թիվը միջին հաշվարկով Հ. Դանիելյանի անվան արվեստի դպրոցում 640 է, Ս. Ասլամազյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոցում՝ 430, Նոր Նորքի մշակույթի կենտրոնում՝ 527, ուսումնամեթոդական, գիտարտադրական կենտրոնում՝ 375: Կենտրոնական գրադարանում ընթերցողների թիվը 6000 է:

Նոր Նորք վարչական շրջանում պետական տոների և հիշատակի օրերի առթիվ կազմակերպվել են զանգվածային միջոցառումներ, հոբելյանական, գրական-երաժշտական ցերեկույթներ: Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի շրջանակներում իրականացվել են միջոցառումներ, քննարկումներ, ցուցահանդեսներ և պարբերաբար այցելություններ Ծիծեռնակաբերդի հուշահամալիր և թանգարան:

«Երևանյան ամառ 2015» ծրագրի շրջանակում կազմակերպվել է ավելի քան 12 բակային միջոցառում:

Համաքաղաքային շաբաթօրյակներին և ծառատունկին ընդառաջ կազմակերպվել են ֆլեշմոբեր, պատրաստվել են սոցիալական տեսահոլովակներ:



Սպորտդպրոց հաճախող երեխաների ցուցակային թիվը միջին հաշվարկով Աշոտ Ղուլյանի անվան մանկապատանեկան, մարզատեխնիկական կենտրոնում 169 է, Ռուդոլֆ Կարապետյանի անվ. մանկապատանեկան համալիր մարզադպրոցում՝ 390, Երևանի Տորք Անգեղ մարզամշակութային կենտրոնում՝ 344, Նոր Նորքի շախմատի մանկապատանեկան մարզադպրոցում՝ 163:

Նոր Նորք վարչական շրջանում կազմակերպվել են զանգվածային, առողջարարական, մարզական ու երիտասարդական միջոցառումներ, ՀՀ անկախության 24-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների 24-րդ մարզական խաղերը, Ազգային ժողովի գավաթի խաղարկության տարածքային փուլի մրցումները, «Լավագույն մարզական ընտանիք» 2015թ. մրցույթի առաջին փուլը, «Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք» 2015թ. համաքաղաքային բակային ավանդական փառատոնի շրջանային փուլը, 2015թ. նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերը, «Լավագույն մարզական բակ» հանրապետական ստուգատեսը:

Նոր Նորքի մարզիկները հաջողությամբ մասնակցել են նաև միջազգային տարբեր մրցույթների. լավագույնները խրախուսվել են Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի կողմից: